«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Անձի ձևավորումը և հոգեկան զարգացումը կրտսեր դպրոցական տարիքում
ԱՌԱՐԿԱ	Հոգեբանություն
ՀԵՂԻՆԱԿ	Նաիրա Սերգեյի Հովհաննիսյան
ՄԱՐԶ	Լոռու
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Ստեփանավանի թիվ 3 հիմնական դպրոց
ՂԵԿԱՎԱՐ	Մ.գ.դ., դոցենտ, ՌԲԱ պրոֆեսոր Ա. Ծատուրյան

Ստեփանավան 2022 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն

2. Կրտսեր դպրոցականի սոցիալական կարգավիճակը և ես կոնցեպցիան

3. Կրտսեր դպրոցականի ուսումնական գործունեությունը

4. Կրտսեր դպրոցականի մտածողության առանձնահատկությունները

5. Կրտսեր դպրոցականի խոսքի զարգացումը

6. Կրտսեր դպրոցականի տարիքի հիմնական հոգեբանական նորագոյացությունները

7. Եզրակացություն

8. Գրականություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրտսեր դպրոցական տարիքում տեղի է ունենում գիտելիքների զգալի ընդլայնում և խորացում, հմտությունների և ունակությունների կատարելոգործում: Դպրոցականների մոտ ի հայտ են գալիս գործունեության տարբեր տեսակներ նկատմամբ ընդհանուր և հատուկ ընդունակություններ ընդհանուր ընդունակությունները դրսևորվում են գիտելիքների, հմտությունների, ունակություններ արագ ընկալման մեջ, իսկ հատուկ ընդունակությունները առանձին առարկաների խորը ուսումնասիրման, որոշ աշխատանքային գործունեության տեսակների մեջ:

Կրտսեր դպրոցականի առանձնահատկությունը նրանում է, որ նա անսահման վստահում է մեծերին՝ գլխավորապես ուսուցիչներին: Նրանք առանց կասկածանքի ամբողջությամբ ընդունում են մեծերի հեղինակությունը, նրանց տված գնահատականները:

Այս տարիքում երեխաները սկսում են հետաքրքրվել և իրականացնել մտավոր պարապմունքներ: Նրանք իրենց կատարած աշխատանքին տրված գնահատականը ընկալում են ոչ թե իրենց գիտելիքների արժևորում, այլ որպես իրենց անձի նկատմամբ ուսուցչի ունեցած դրական կամ բացասական վերաբերմունքի արտահայտություն:

Կրտսեր դպրոցական տարիքում մեծ փոփոխություններ են կատարվում երեխայի իմացական ոլորտում:Հիշողությունը ձեռք է բերում վառ արտահայտված իմացական բնույթ : Հիշողության ոլորտում փոփոխությունները կապված են նրա հետ, որ երեխան , առաջին հերթին սկսում է գիտակցել մնեմիկ խնդիրը :Նա առանձնացնում է այդ խնդիրը յուրաքանչյուր ուրիշ խնդրից:Երկրորդ, ընթանում է մտապահման հնարքների արագ ձևավորում:

Ըմբռման ոլորտում կատարվում է անցում նախադպրոցական երեխայի ոչ կամածին ըմբռնումից օբյեկտի նպատակաուղղված կամածին ուսումնասիրության, որը ենթարկվում է որոշակի խնդրին : Դպրոցում ամբողջ գործունեությունը իր բնույթվ

հաղիսանում է կամածին,այդ պատճառով ակտիվորեն զարգանում է կամքը և ինքնակազմակերպվածությունը:

Առավել էական փոփոխությունները կարելի է նկատել մտածողության ոլորտում,որը ձեռք է բերում վերացական և ընդհանրացված բնույթ:Ավարտվում է անցումը ակնառու-պատկերային մտածողությունից բառատրամաբանական մտածողության:

Կատարվում է ընդհանրացման նոր ձևի զարգացում,որը հիմնված էառարկաների և երևույթների էապես հատկանիշների՝ տեսակն մտածողության վրա:

Մտածողության նոր մակարդակի զարգացման շնորհիվ կատարվում է բոլոր մնացած հոգեկան գործընթացների :Այդ պատճառով էլ ամբողջ իմացական ոլորտի վերակառուցումը կապված տեսակն մտածողության զարգացման հետ կազմում է մտավոր զարգացման հիմնական բովանդակությունը կրտսեր դպրոցականի տարիքում:

Կրտսեր դպրոցական տարիքի վերջում ձևավորվում եմ աշխատանքային , գեղարվեստական ,հասարակայնորեն օգտակար գործունեության տարրերը:Ստեղծվում են նախադրյալները մեծահասակության զգացման զարգացման համար, երեխան մտածում է ,որ կարող է ամեն ինչ կատարել ինչպես մեծահասակը:

Անձի ձևավորումը և հոգեկան զարգացումը կրտսեր դպրոցական տարիքում

Երբ երեխան գնում է դպրոց ՝ կատարվում է երեխայի հարաբերությունների ամբողջ համակարգի վերակառուցում իրականության հետ: Ըստ Դ. Բ. Էլկոնինի նախադպրոցականի մոտ գոյություն ունի սոցիալական հարաբերությունների երկու ոլորտ << երեխա – ուսուցիչ >> և << երեխա –երեխաներ >>համակարգերում :

<< Երեխա – ուսուցիչ >> համակարգը սկսում է կանխորոշել երեխայի վերաբերմունքը ծնողների և երեխաների նկատմամբ , նրանից է կախված կյանքի համար բարենպաստ բոլոր պայմանների ամբողջությունը՝ << երեխա – հասակակիցներ >> և << երեխա – ծնողներ >> համակարգերում :

Առաջին անգամ <<երեխա- ուսուցիչ>> փոխհարաբերությունը դառնում է << երեխա – հասարակություն >> հարաբերություն : Այսպիսով երեխան , որը հաճախում է տարրական դպրոց , հոգեբանորեն անցնում է նրան շրջապատող մարդկանց հետ հարաբերությունների նոր համակարգի մեջ : Նախադպրոցական մանկության ազատությունը փոփոխվում է կախվածության հարաբերություններով և կյանքի նոր կանոններին ենթարկվելու անհրաժեշտությամբ : Ընտանիքը նորովի է սկսում վերահսկել երեխային դպրոցում սովորելու անհրաժեշտության հետ կապված , կատարել տնային առաջադրանքներ , օրվա ռեժիմը խիստ կազմակերպելու հետ կապված:

Այսպիսով նոր սոցիալական իրադրությունը խստացնում է երեխայի կյանքի պայմանները և նրա համար հանդես է գալիս որպես սթրեսածին ՝ մեծանում է հոգեկան լարվածությունը :Դա արտահայտվում է ոչ միայն ֆիզիկական առողջության այլ նաև երեխայի վարքի վրա:

Կյանքի պայմաններին ադապտացվելու բնույթը և երեխայի նկատմամբ վերաբերմունքը ընտանիքի կողմից կանխորոշում է անձի զգացմունքների իրավիճակը և զարգացումը: Փոփոխվում է երեխայի կարգավիճակը ինչպես հասարակության մեջ , այնպես ընտանիքում , նա աշակերտ է՝ պատասխանատու մարդ:

Հասակակիցների հետ հաղորդակցումը , ինչպես և համատեղ գործունեությունը , երեխայի անձի ձևավորման պարտադիր պայման է : Հաղորդակցման պրոցեսում նա մշակում է կոմունիկատիվ հմտություններն ու կարողությունները, ձևավորում գիտելիքներ շրջապատողների և սեփական << Ես >> - ի վերաբերյալ ՝ համեմատելով իրեն հասակակիցների , իսկ հետո նաև մեծահասակների հետ : Համատեղ գործունեությունը և հաղորդակցումը կազմում են միասնություն :

Միջանձնային հաղորդակցման 3 կողմերն են .

1. Հաղորդակցման կոմունիկատիվ կողմ
    1. Հաղորդակցման ինտերակտիվ կողմ , այստեղ դրսևորվում է նրանց համագործակցելու , միմյանց օգնելու , իրենց գործողությունները կոորդինացնելու և փոխհամաձայնեցնելու ընդունակությունը : Հաղորդակցման հմտությունների և կարողությունների բացակայությունը կամ նրանց ոչ բավարար ձևավորվածությունը երեխայի մոտ բացասականորեն են ազդում նրա անձի զարգացման վրա , առաջացնում են դժվարություններ նրա դաստիարակության մեջ:
2. Հաղորդակցման պերցեպտիվ կողմ այն բնութագրում է երեխաների կողմից իրենց ընկերների փոխըմբռնման գործընթացը , նրանց անհատական գծերի հատկանիշների ճանաչման գործընթացը:

    Հաղորդակցումը հանդիսանում է երեխայի նորմալ զարգացման պայման ՝ մանկապարտեզի խմբերում , դասարանում , տարբեր տեսակի ֆորմալ և ոչ ֆորմալ մանկական և դեռահասների խմբերում: Սոցիալ-հոգեբանական փորձի ձեռք բերման համար երեխան կարիք ունի հաղորդակցման շրջանակի մշտական ընդլայնման : 6 տարեկան երեխաները հասակակիցների հետ հաղորդակցման մեջ անցկացնում են ժամանկի 50-70 տոկոսը :

    Հաղորդակցման բովանդակությունը , հաճախականությունը ձևերը էականորեն փոփոխվում են տարիքի հետ միասին :

Կրտսեր դպրոցական համար մեծահասակը շարունակում է մնալ ամենահեղինակավոր անձը : Երեխաները առաջնորդվում են գլխավորապես ուսուցչի կարծիքով , ուստի երեխաների հարաբերությունները կրտսեր դպրոցական տարիքում հիմնականում կառուցվում է մանկավարժի ուղղակի կամ անուղղակի մասնակցությամբ: Կրտսեր դպրոցականներին բնորոշ են հասակակիցների բևեռացված գնահատականներ ՝ մի մասին նախընտրում է մեծամասնությունը, մյուսներին ոչ մեկը , ինչը նույնպես կապված է երեխայի սոցիալական դիրքի փոփոխության հետ, նրա համար նոր ուսումնական գործունեության մեջ ներգրավումով Հասակակիցների վերաբերմունքը միմյանց հետ ձեռք է բերում կայունության հատկանիշներ , առանձնանում են ընդունված երեխաները, որոնք օժտված են հաղորդակցման հմտություններով և կարողություններով և երեխաներ , որոնք չեն վայելում հասակակիցների սերը դասարանում: Ներդասարանային հաղորդակցման համակարգում անբարենպաստ դիրքը կարող է երեխային դարձնել կոնֆլիկտային և դժվար ՝ մանկավարժի ներգործության համար:

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաները իրենց հարաբերություններ կառուցում են գտնվելով նոր դերի մեջ:Սոցիալական զարգացման նոր իրադրությունը , որը կապված է դպրոց հաճախելու հետ, ադապտացիայի անհրաժեշտություն է առաջացնում: Նոր պահանջները տարածվում են կյանքի բոլոր հարաբերությունների վրա , և առաջին հերթին ուսուցիչների , ծնողների և հասակակիցների հետ փոխհարաբերությունների վրա: Կրտսեր դպրոցականների փոխհարաբերությունները սկզբնապես զարգանում են որպես սովորողների միջև ֆունկցիոնալ – դերային հարաբերություններ : Համապատասխանաբար միմյանց գնահատականների համար հիմք են հանդիսանում դերի ևոչ թե անձնային բնութագիրները :

Այս տարիքում սովորողների փոխհարաբերությունների զարգացումը ունի մի քանի հիմքեր :

Նախ ձևավորվում են մարդու նկատմամբ պահանջների մասին պատկերացումները, որոնց հիման վրա կրտսեր դպրոցականները գնահատում են միմյանց: Ընդ որում գնահատելիս նրանք հիմնվում են այն հասկացման վրա, թե ինչքանով է խմբի տվյալ անդամը համապատասխանում աշակերտի դերի մասին պաշտոնական պատկերացումներին, որտեղ գլխավոր կողմնորոշիչներն են՝ առաջադիմությունը և կարգապահությունը :Որպես կանոն , սոցիոմետրական աստղերի մեջ չկան այնպիսի երեխաներ, որոնք ունեն ցածր առաջադիմություն և վատ վարք, իսկ խմբի կողմից մերժվածները հիմնականում ունեն այս բնութագիրները:Այսպիսի ձևավորվող միջանձնային հարաբերությունները կարող են չհամապատասխանել աշակերտի վարքի պաշտոնական ձևերին և նորմերին , քանի որ ժամանակակից երեխաները իսկական ընկերության դրսևորումները տեսնում են նաև այդ նորմերի հակադրվելու մեջ:

Փոխադարձ գնահատականների ձևավորմանպայմանն է հանդիսանում ուսումնական գործունեությունը և նաև այն, թե ինչպես է ուսուցիչը ՝ առավել ռեֆերենտային մեծահասակը, վերաբերվում այս կամ այն աշակերտին:

Կրտսեր դպրոցականների կարգավիճակը դասարանային խմբում բավականի կայուն է:Բայց այստեղ նկատվում է սեփական կարգավիճակի գիտակցման պարադոքսը ,երբ բարձր սոցիոմետրական կարգավիճակ ունեցողները, թերագնահատում են իրենց դիրքը խմբում, իսկ ցածրերը՝ ընդհակառակը:Վերջին դեպքում, ըստ որոշ գիտնականների, երեխաները խուսափում են իրենց ցածր դիրքի գիտակցումից հոգեբանական պաշտպանական հնարների միջոցով: Ինչպես բարենպաստ , այնպես էլ անբարենպաստ դիրքը անձի ձևավորման կարևոր պայման են հանդիսանում:
Կրտսեր դպրոցական տարիքում դասարանային խմբի հոգեբանական մթնոլորտը սերտորեն կապված է մանկավարժական ներգործության ձևերի հետ: Մանկավարժի այսպես կոչված <<աջակցող>> վարքը նպաստում է երեխաների միջև հարաբերությունների բարենպաստ ֆոնի ձևավորմանը, իսկ առավելապես բացասական սանկցիաների կիրառումը հանգեցնում է երեխաների կողմից անվստահության դեպի մեծահասակները, կոնֆլիկտների և մանկական միջավայրում անառողջ մթնոլորտի:

Կրտսեր դպրոցականի սոցիալական կարգավիճակը և ես-կոնցեպցիան

Դպրոց ընդունված երեխան զբաղեցնում է նոր տեղ մարդկանց հարաբերությունների համակարգում , նրա մոտ առաջանում են մշտական պարտականություններ , որոնք կապված են ուսումնական գործունեության հետ: Այստեղ առաջին անգամ առաջանում են գործնական հարաբերություններ մեծահասակների հետ: Նախադպրոցական տարիքի վերջում երեխան իրենից ներկայացնում էանձնավորություն հայտնի իմաստով:

Դպրոցում կյանքի նոր պայմաններում մածահասակների և հասակակիցների հետ հարաբերությունների մեջ ավելի շուտ ձեռք բերված ռեֆլեքսիվ ընդունակությունները զարգանում են : Միևնույն ժամանակ ուսումնական գործունեությունը երեխայից պահանջում է հատուկ ռեֆլեքսիա , որոնք կապված են մտավոր գործողությունների՝ ուսումնական խնդիրների վերլուծության , կատարողական գործունեությունների վերհսկման և կազմակերպման, խնդիրների մտավոր պլանավորման և լուծման հետ:

Մոտիվացիոն ոլորտը, ինչպես համարում էԱ.Ն.Լեոնտյևը , անձի միջուկն է : Առանձնացնում են ուսումնական գործունեության արտաքին և ներքին մոտիվներ: Ներքին մոտիվներ են՝ իմացական (գիտելիքներ ձեռք բերելու ձգտումը ,գիտելքիների ինքնուրույն ձեռքբերման եղանակների տիրապետելու ձգտումը), սոցիալակա մոտիվները (լինելկրթված, գրագետ,հասարակությանը օգտակար մարդ):

Արտաքին մոտիվներն են՝ սովորել լավ գնահատականների համար,նյութական պարգևատրության համար, այսինքն կարևորը ոչ թե գիտելիքների ձեռք բերումն է, այլ որևէ պարգևատրությունը:

Առաջադիմության գնահատականը դպրոցական ուսուցման սկզբում ըստ էության հանդիսանումէ երեխայի անձի գնահատմանը և կանխորոշում է նրա սոցիալական կարգավիճակը:

Բարենպաստ պայմաններում զարգանում է սեփական արժանապատվության զգացումը երեխայի մոտ, <<ես լավն եմ>> երեխայի ներքի դիրքորոշումը սեփական անձի նկատմամբ:

Երեխայի բարոյական զգացմունքների զարգացումը կատարվում է նորմատիվ գիտելիքների և այն բարոյական զգացմունքների <<ներս տեղափոխելու>> արդյունքում, որոնք առաջանում են երեխայի մոտ մեծահասակի կողմից գնահատման արդյունքում:

Կրտսեր դպրոցական տարիքում պատասխանատվության զարգացումը սեփական անձի համար (սեփական գործողությունների համապատասփանությունը անհրաժեշտ նպատակներին, նորմատիվներին հասկանալու ընդունակությունը) սկսում է արագորեն զարգանալ աշակերտի ուսումնական գործունեության և դիրքորոշման ազդեցության տակ:Երբ վարքի դրական էտալոններին համապատասխանելու պահանջմունքը ձեռք է բերում անձնական իմաստ , երեխայի մոտ առաջանում է պատասխանատվությունը որպես անձի հատկանիշ:

Անձնական փորձը ցույց է տալիս , որ սովորողի կարգավիճակը էապես կապված է նրա առաջադիմության հետ: Միևնույն ժամանակ ,ոչ այնքան առաջադիմությունը, այլ ուսման նկատմամբ նրա վերաբերմունքը բնութագրող անձնային հատկանիշներ են որոշում աշակերտի դիրքը դասարանում: Ընդունված և ճանաչված են լինում այն սովորողները, որոնք ունեն հետաքրքրությունների լայն շրջանակ և որոնք առանձնանում են ուսման նկատմամբ լուրջ վերաբերմունքով: Միջանձային հարաբերությունների համակարգում անբարենպաստ դիրք գրավում են հիմանկանում թույլ սովորող կամ ընդհանրապես չսովորող աշակերտները , որոնք ունենում են շատ ցածր կարգավիճակ:

Անշուշտ , վերջին ժամանակներում այս օրինաչափությունը ավելի հաճախէ խախտվում կապված հասարակական նոր գաղափարների,արժեքների և նորմերի զարգացմանհետ: Դասարաններում արդեն ավելի հաճախ են հանդիպում հոգեկան զարգացման ցածր մակարդակով, բայց սոցիալական բարձր կարգավիճակով աշակերտներ: Սա պայմանավորված է նրանով ,որ այս երեխաները տիրապետում են որոշակի իրերի համախմբի, պատկանում են որոշակի սոցիալական խմբերի և այլն: Այս դեպքում

մանկավարժի համար նպատակահարմար է արտադասարանային գործունեության մեջ ավելի շատ հենվե լ լավ սովորողնեի վրա , որը կբարձրացնի նրանց կարգավիճակը: Սակայն սա կարող էհանգեցնել դասարանի հոգեբանական մթնոլորտի փոփոխմանը:

Այս ամենը ունի իր հոգեբանական հիմքերը: Առաջադիմությունը, որը բարձր է գնահատվում հասակակիցների կողմից : Սրա հետ մեկտեղ , այն լավ սովորողները,որոնք քիչ են ետ մնում գերազանցիկներից,նրանց նկատմամբ տրամադրված են ավելի անբարյացակամորեն , քան թույ լսովորողները , որոնք նույնիսկ ձգտում են գերազանցիկների հետ շփման և նման հարաբերությունների առկայության դեպքերը քիչ չեն: Փորձնականում հաստատավել է, որ ինչքան ցածր է գերազանցիկին գնահատողի առաջադիմությունը, այնքան բարձր են գնահատականները և այնքան բարոյական է վերաբերմունքը: Փոխադարձ գնահատակնանների դեֆորմացիան կարող է առաջանալ դասերի ժամանակ կոլոկտիվ գործունեության պակասից : Եթե թույլ աշակերտների համար ուժեղները և գերազանցիկները էտալոն են հանդիսանում , ապա ուժեղների համար վերջիններս մրցակիցներ են հանդիսանում:

Ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերվել է առաջադիմության և կարգավիճակի կապի տարիքային դինամիկան : Կրտսեր դպրոցում փոխադարձ գնահատականները մեծամասամբ կողմնորոշված են դեպի ուսուցչի տված գնահատականները : Միջին դպրոցում դրանք ավելի դիֆերենցված են , որը հանգեցնում է այն բանին , որ նույնիսկ թույ լառաջադիմություն ունեցողները կարող են ունենալ բավականին բարձր կարգավիճակ :

Ինչևէ, ասվածից երևում է , որ ցածր առաջադիմություն ունեցողները որպես կանոն չեն ընդգրկվում սոցիոմետրական աստղերի շարքում, բայց միևնույն ժամանակ պարզվում է , որ գերազանցիկները ևս կարող են հանդես գալ որպես խմբի չընդունված և մերժված անդամներ:

Կրտսեր դպրոցականի ուսումնական գործունեությունը

Ուսումնական գործունեությունը՝ դա գործունեություն է ,որն անմիջականորեն ուղղված է մարդկության կողմից կուտակված գիտության և մշակույթի նվաճումների յուրացմանը: Գիտության և մշակույթի առարկաները ՝ դրանք հատուկ առարկաներ են , որոնց հետ անհրաժեշտ է սովորե լ գործել :

Ուսումնական գործունեության տարօրինակությունը կայանում է նրա մեջ, որ յուրացնելով գիտելիքները, երեխան ոչինչ չի փոխում այդ գիտելիքներում: Ուսումնական գործունեության մեջ փոփոխությունների առարկա է դառնում առաջին անգամ ինքը երեխան , այն սուբյեկտն , որը իրականացնում էայդ գործունեությունը : Ուսումնական գործունեությունը հանդիսանում է այնպիսի գործունեություն, որը երեխային թեքում է իր վրա , պահանջում է ռեֆլեքսիա , այն բանի գնահատում , <<թե ի՞նչ եմ ես եղել և ի՞նչ եմ դարձել>>: Ուսումնական գործունեությունը ընտրված չի պատրաստի ձևով , այն պետք է ձևավորված լինի: Առաջին դժվարությունը կայանում է նրա մեջ ,որ դրա դրդապատճառը , որի հետ նա գալիս է դպրոց կապած չէ այն գործունեության բովանդակության հետ , որը նա պետք է կատարի դպրոցում: Ուսուցման գործընթացը պետք է այնպես կառուցված լինի , որ նրա դրդապատճառը կապված լինի յուրացման առարկայի սեփական, ներքի բովանդակության հետ : Հասարակայնորեն անհրաժեշտ գործունեության նկատմամբ դրդապատճառը , չնայած որ մնում է որպես ընդհանուր դրդապատճառ , սակայն ուսուցմանը խթանելու է այն բովանդակությունը , որին սովորեցնում են երեխային դպրոցում , այսինքն անհրաժեշտ է ձևավորել իմացական մոտիվացիա :

Ուսուցման գործունեության կառուցվածքն ըստ Դ.Բ.Էլկոնինի.

1.Ուսուցման մոտիվացիա ՝ մղումների համակարգ, որը ստիպում է երեխային սովորել , ուսումնական գործունեությանը տալիս է իմաստ :

2. Ուսումնական խնդիր , այսինքն առաջադրանքների համակարգ , որոնց կատարման ժամանակ երեխան յուրացնում էգործողության առավե լընդհանուր եղանակները:

3.Ուսումնական գործողություններ ՝ դրանց օգնությամբ յուրացվում է ուսումնական խնդիրը ,այսինքն այն բոլորը գործողությունները , որոնք աշակերտը կատարում է դասին:

4. Վերհսկման գործողությունները՝ այն գործողությունները, որոնց օգնությամբ վերհսկվում է ուսումնական խնդրի յուրացումը :

5.Գնահատականի գործողությունը՝ այն գործողությունները, որոնց օգնությամբ մենք գնահատում ենք ուսումնական խնդրի յուրացման հաջողությունը:

Ուսումնական գործունեությունը սկզբնական փուլերում իրագործվում է ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեության ձևով: Ուսումնական գործունեության գործընթացը ՝ դա ուսուցչից աշակերտին, նրա առանձին օղակների փոխանցման գործընթացն է : Ուսումնական գործունեության զարգացած ձևը այնպիսի ձև է , որի մեջ սուբյեկտը ինքնուրույն իր առջև դնում է սեփական փոփոխության խնդիրները:

Կրտսեր դպրոցականի մտածողության առանձնահատկությունները

Երեխայի առողջ հոգեկանի առանձնահատկությունն է՝ իմացական ակտիվությունը:Երեխայի հետաքրքրասիրությունը մշտապես ուղղված էշրջապատող աշխարհի իմացության և այդ աշխարհի սեփական պատկերի կառուցման: Երեխան խաղալով , փորձարկում է, փորձում է կայացնել պատճառահետևանքային կապեր և կախվածություններ: Իհարկե կրտսեր դպրոցականը կարողէ մտածել տրամաբանորեն , սակայն անհրաժեշտ է հիշել, որ այդ տարիքը սենզիտիվ է ուսուման նկատմամաբ ,որը հենվում էակնառության վրա :

:Սկզբնական շրջանում կրտսեր դպրոցականները մտածում են նախադպրոցական ձևով, երեխան ելնում է երևույթի անմիջական պրակտիկ կարևորությունից, նա ի նկատի չէ առնում այդ երևույթի գենեզիսը, հենց դա էլ կարևոր է գիտական հասկացությունների սահմանման համար:

Կենսական մտածողությունը աշակերտին թույլ է տալիս լուծել խնդիրներ, կողմնորոշվելով ոչ թե օբյեկտների արտաքին ,ակնառու հատակնիշների և կապերի վրա,

այլ ներքին, էական հատակնիշների և հարաբերությունների վրա:Տեսական մտածողության զարգացումը կախված էնրանից, թե ինչ և ինչպես են սովորեցնում երեխային, այսինքն ուսուցման տիպից:

Վ.Վ.Դավիդովը իր <<Ընդհանրացման տիպերը ուսուցման մեջ>> գրքում տվել է էմպիրիկ և տեսական մտածողության լայն համեմատական բնութագիրը, ցույց տալով,որ տեսակն ընդհանրացումը չի զարգանում էմպիրիկի ներսում,հետևաբար պահանջվում էուսումնական առարկաների նոր տրամաբանություն:

Կրտսեր դպրոցականի խոսքի զարգացումը

Դպրոց ընդունվելու պահին երեխայի բառապաշարն ավելանում է այնքան , որ նա կարող է ազատ բացատրել այլ մարդու հետ ցանկացած առիթով: Կրտսեր դպրոցականների մոտ առաջանում է մայրենի լեզվի համակարգերի վրա (ձայնային,ուղղագրական) կողմնորոշում:Արագորեն զարգանում է դպրոցականի կոնտեքստային և բացարտական խոսքը , ձևավորվում է խոսքի էմոցիոնալկուլտուրան:

Երեխայի խոսքի զարգացման համարհատուկ նշանակություն ունի գրավոր խոսքի տիրապետելը: Գրավոր խոսքը ունի իր առանձնահատկությունը , այն պահանջում է ավելի շատ վերահսկողություն , քան բանավորը: Բանավոր խոսքը կարող է լրացվել ուղղումներով, լրացումներով նրան , ինչն արդեն ասվել է: Նրա մեջ մասնակցություն է ունենում էքսպրեսիվ գործառույթը՝ արտահայտության տոնավորումը, խոսքի դիմաշարժական և մարմնական ուղեկցումը:

Գրավոր խոսքը ունի իր առանձնահատկությունը դարձվածների կառուցման մեջ, ուղղագրական ձևերի օգտագործման մեջ:Տեքստերն ունեն ոճական տարբերություններ: Գրավոր խոսքի համար կարևոր նշանակություն ունի նրա ուղղագրական, կետադրական և ձևաբանական կառուցվածքը: Երեխան տիրապետում է գրելուն գրավոր խոսքի հետ միասին:

Գրավոր խոսքի յուրացումը որակականորեն փոխում է նաև երեխայի բանավոր խոսքը: Այն ազդում է նաև երեխայի հոգեկան զարգացման վրա :Գրավոր խոսքի զարգացումը՝ գործընթաց է որը կապված է ունակությունների ձեռքբերման , կարդալու և գրելու հետ, այսինքն զուգորդության կայացում տառի և հնչյունի միջև գրավորի և ընթերցանության մեջ ,դա խոսք չ էուղղակի իմաստով , այլ ձայնային սիմվոլների խորհրդանշում , այսինքն երկակի վերարձակում: Այդ պատճառով ուղղագրությունը խաղում է էական դեր երեխայի զարգացման հետ: Գրավոր խոսքը պահանջում է կամածին կառուցում և մշտական վերհսկողություն : Ներքին խոսքը գրավորի փոխանցման գործընթացը բավականի բարդ է, քանի որ ներքին խոսքը խոսք է քո համար , իսկ գրավոր խոսքը գլխավորապես կառուցված է ուրիշի համար , որը պետք է հասկանա. թե ինչ է գրված :
Այսպիսով գրավոր խոսքին տիրապետելու գործընթացը մշտապես կապված է կրտսեր դպրոցականի նորագոյացությունների հետ, հոգեկան գործընթացների կամածնության հետ, սիմվոլների և նշանների հետ աշխատելու ունակության հետ , հասկացությունների յուրացման հետ , ներքին խոսքի առաջացման և գործողությունների ներքին պլանի հետ :

Կրտսեր դպրոցական տարիքի հիմանակն հոգեբանական նորագոյացությունները

Կրտսեր դպրոցական տարիքում մեծ փոփոխություններ են կատարվում երեխայի իմացական ոլորտում :Հիշողությունը ձեռք է բերում վառ արտահայտված իմացական բնույթ : Հիշողության ոլորտում փոփոխությունները կապված են նրա հետ, որ երեխան, առաջին հերթին սկսում է գիտակցել մնեմիկ խնդիրը : Նա առանձնացնում է այդ խնդիրը յուրաքանչյուր ուրիշ խնդրից: Երկրորդ՝ ընթանում է մտապահման հնարքների արագ ձևավորում:
Ըմբռման ոլորտում կատարվում է անցում նախադպրոցական երեխայի ոչ կամածին ըմբռնումից օբյեկտի նպատակաուղղված կամածին ուսումնասիրության, որը ենթարկվում է որոշակի խնդրին: Դպրոցում ամբողջ գործունեությունը իր բնույթով

հադիսանում է կամածին , այդ պատճառով ակտիվորեն զարգանում է կամքը և ինքնակազմակերպվածությունը:

Առավել էական փոփոխությունները կարելի է նկատել մտածողության ոլորտում, որը ձեռք է բերում վերացական և ընդհանրացված բնույթ:Ավարտվում էանցումը ակնառու-պատկերային մտածողությունից բառատրամաբանական մտածողության:

Կատարվում է ընդհանրացման նոր ձևի զարգացում, որը հիմնված է առարկաների և երևույթների էապես հատկանիշների՝ տեսակն մտածողության վրա:

Մտածողության նոր մակարդակի զարգացման շնորհիվ կատարվում է բոլոր մնացած հոգեկան գործընթացների վերակառուցում, այսինքն Դ.Բ.Էկոլինին նշել է՝ <<հիշողությունը դառնում է մտածական, իսկ ըմբռնումը՝ մտածող>>: Այդ պատճառով էլ ամբողջ իմացական ոլորտի վերակառուցումը կապված տեսակն մտածողության զարգացման հետ կազմում է մտավոր զարգացման հիմնական բովանդակությունը կրտսեր դպրոցականի տարիքում:

Կրտսեր դպրոցական տարիքի վերջում ձևավորվում եմ աշխատանքային, գեղարվեստական,հասարակայնորեն օգտակար գործունեության տարրերը: Ստեղծվում են նախադրյալները մեծահասակության զգացման զարգացման համար, երեխան մտածում է ,որ կարող է ամեն ինչ կատարել ինչպես մեծահասակը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երբ երեխան գնում է դպրոց կատարվում է երեխայի հարաբերությունների ամբողջական համակարգի վերակառուցում ։Ձևավորվում է շփման նոր օղակ <<երեխա _ մեծահասակ_ երեխա>>։Ուստի և երեխան հոգեբանորեն անցնում է իրեն շրջապատող մարդկանց հետ նոր համակարգի մեջ։Նոր սոցիալական իրադրությունը երեխայի համար դառնում է սթրեսածին՝մեծանում է հոգեկան լարվածությունը ինչը կապված է օրվա ռեժիմի խստացումից և այն ազդում է երեխայի վարքի և առողջության վրա։

Նա ձեռք է բերում նոր դեր և իր վրա կրում պատասխանատվություն։

Հասակակիցների հետ հաղորդակցումը և համատեղ գործունեությունը երեխայի անձի ձևավորման պարտադիր պայմաններ են։Միջանձնային հաղորդակցման մեջ առանձնացվում է երեք կողմեր

1. Կոմունիկատիվ /ժեստերի միջոցով շփում/
2. Ինտերակտիվ /համագործակցություն/
3. Պերցեպտիվ /խոսքային հաղորդակցում/

Հաղորդակցման այս երեք կողմերը կենսականորեն անհրաժեշտ են երեխայի նորմալ զարգացման համար։

Երեխաների համար այս տարիքային շրջանում ամենահեղինակավոր մարդն է համարվում մեծահասակը ։Այս տարիքում է, որ երեխան իր համար ընկեր է ընտրում՝ գլխավորապես ուսման մեջ առաջադեմ հասակակիցներից։

Կրտսեր դպրոցական տարիքում դասարանի հոգեբանական մթնոլորտը կապված է մանկավարժական ներգործության ձևերի հետ։

Այս տարիքում ,է որ երեխայի մոտ սկսում է ավելի լավ զարգանալ մտավոր գործողություններ կատարելու կարողությունները։

Ըստ Ա.Ն. Լեոնտևի առանձնացվում է ուսումնական գործունեության երկու ոլորտ՝ արտաքին և ներքին ։

Երեխայի մոտ ձևավորվում է նոր դիրքորոշումներ սեփական անձի նկատմամբ,պատասխանատվությունը երեխայի համար դառնում է անձի հատկանիշ։

Դասարանում ուսման մեջ առաջադեմ երեխաները միջանձնային հարաբերություններում գրավում են ավելի բարձր կարգավիճակ՝ քան թույլ սովորողները ։Սակայն ներկայումս դասարանում հաճախ է հանդիպում հոգեկան զարգացման ցածր մակարդակ՝ պայմանավորված երեխայի սոցիալական բարձր կարգավիճակով։

Միևնույն ժամանակ պարզվում է նաև ,որ գերազանցիկները ևս կարող են հանդես գալ որպես խմբի մերժված անդամներ։

Կրտսեր դպրոցականների մոտ ուսումնական գործունեությունը անմիջականորեն ուղղված է մարդկության կողմից կուտակված գիտության և մշակույթի նվաճումների յուրացմանը։

Դ.Բ.Էլկոնինինը ուսումնական գործունեության մեջ առանձնացնում է .

1. Ուսուցման մոտիվացիա /մղումների համակարգ,որը ստիպում է երեխային սովորել/
2. Ուսումնական խնդիր /առաջադրանքների համակարգ,որոնց կատարման ժամանակ երեխան յուրացնում է գործողության առավել ընդհանուր եղանակները/
3. Ուսումնական գործողություններ /այն բոլոր գործողությունները,որոնք երեխան կատարում է դասի ժամանակ/
4. Վերահսկման գործողություններ /որոնց օգնությամբ վերահսկվում է ուսունմական խնդրի յուրացումը
5. Գնհատականի գործողություն /գնահատվում է ուսումնական խնդրի յուրացման հաջողությունը/

Երեխայի հետաքրքրությունները մշտապես ուղղված են լինում շրջակա միջավայրի իմացությանը և սեփական պատկերի կառուցմանը։Այս տարիքային փուլում է ձևավորվում տեսական մտածողությունը։Տեսական մտածողությանը կախված է ուսուցման ձևից։

Կրտսեր դպրոցականների մոտ արագորեն սկսում է զարգանալ կոնտեքստային և բացատրական խոսքը՝ ինչի արդյունքում ձևավորվում է խոսքի էմոցիոնալ կուլտուրան։

Երեխայի խոսքի զարգացման համար մեծ նշանակություն ունի գրավոր խոսքը՝ ինչը որակականորեն փոխում է բանավոր խոսքը, ինչպես նաև ազդում է երեխայի հոգեկան զարգացման վրա։

Կրտսեր դպրոցական տարիքում մեծ փոփոխություններ են կատարվում երեխայի իմացական ոլորտում՝սկսում է տիրապետել մտապահման հնարքները, զարգանում է կամածին ըմբռնումը ,կամքը, ինքնակազմակերպվածությունը ակնառու _պատկերային մտածողությունից անցնում է բառատրամաբանական մտածողության։

Այս տարիքի վերջում ձևավորվում են աշխատանքային գեղարվեստական և հասարակայնորեն օգտակար գործունեության տարրեր։

Գրականություն

1. Ա. Հովհաննիսյան «Դպրոցի շեմին» Երևան 2003
2. Հ, Գարդներ «Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը կրտսեր դպրոցում»
3. Վ.Ա Կրուտեցկի << Մանկավարժական հիմունքներ>>
4. Լ.Ի Բոժովիչ << Личность и ее формирование в детском возрасте>> 1868г.
5. Դ. Բ. Էլկոնին <<Психология игри>> 1978 г.